«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման ծրագիր»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի համապատասխան

Մեթոդիստ՝ Փիրուզ Ղարագյոզյան

Մանկապարտեզ «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023 թ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

ԳԼՈՒԽ 1 ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……5

1.1 Չափորոշիչների կիրառման առանձնահատկությունները և ոլորտները նախադպրոցական ուսումնական հաստատությունում ……5

1. 2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշինչերի պահանջների կիրառումը որպես ուսումնական և դաստարակչական աշխատանքների կազմակերպան հիմք. 9

1. 3 Ուսումնական գործընթացի պլանավորման կարևորությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում……14

ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ……17

2. 1 Ուսուցման և դաստիարակչական աշխատանքի պլանավորում՝ չափորոշչային պահանջներին համապատասխան ……17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ներկա ժամանակաշրջանում երեխայի համակողմանի զարգացումը, կրթությունը, կյանքի և հասարակության մեջ ճիշտ ինտեգրմանը նախապատրաստելը ցանկացած պետության՝այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքականության հիմքն է, որն էլ պետությունը ապահովում է նախադպրոցական կրթության հաստատությունների միջոցով: Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Այն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա նախասիրություններին, ունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Նախադպրոցական ուսուցման կազմակերպան գործընթացում կարևոր է, որ ինչպես ղեկավար այնպես էլ մանկավարժական անձնակազմը իրազեկ լինի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանած իր պաշտոնային պարտականություններին, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքով սահմանված իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով» սահմանված պահանջներին: Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչն այն հիմնական նորմատիվն է, որի պահանջներին համապատասխան պետք է պլանավորվի ուսումնական պարապմունքը և դաստիարակչական աշխատանքը: Չափորոշչում պետության կողմից հստակ ամրագրված են նախադպրոցականի կրթության ու զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջները /կրթական ծրագրի բովանդակություն, ծավալ/՝ ինչպես նաև պարտադիր կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի երեխան, ուստի յուրաքանչյուր մանկավարժական աշխատող, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, պետք է անպայման պահպանի նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային պահանջները, որպեսզի կարողանա ունենալ համապատասխան վերջնարդյունքներ: Չափորոշիչների արդյունավետ կիրառումը հենց այն հիմնաքարն է, որը կնպաստի երեխաների զարգացման ընթացքի և

առաջադիմության մակարդակի բարձրացմանը երեխայի կարիքներին և հետաքրքրություններին արձագանքմանը, գիտելիքների կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Հենց այս հիմնախնդրով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման ու իրականցման հիմնախնդիրները՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմնական դրույթները:

2. Ուսումնասիրել այն մեթոդները որոնց միջոցով նախադպրոցական ուսումնական հաստատությունում արդյունավետ է դառնում ուսումնական պարապմունքների և դաստիարակչական աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը:

Հետազոտության վարկածը: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորումը բարձրացնում է դրա արդյունավետությունը:

Հետզոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից՝ որոնցից մեկը տեսական, իսկ մյուսը հետազոտական, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 23 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Չափորոշիչների կիրառման առանձնահատկությունները և ոլորտները նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները։ [1] Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է, որոնք ներառում են ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները, դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը, երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության ձևերը ինչպես նաև երեխայակենտրոն միջավայրի ապահովումը։ Այն հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը։ Չափորոշիչը հստակ սահմանում է թե ինչ պետք է իմանա և կարողանա անել նախադպրոցական տարիքի երեխան ուսուցման ավարտին՝ տարիքային առանձնահատկություններից ելնելով։ Վերջնարդյունքներն ուղղված են երեխաների կարողունակությունների ձևավորմանը։ Կրողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարկության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքման ձևերն են։

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը սահմանում է կարողունակության հետևյալ տեսակները։

[1] «ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին» Երևան 2020 թ. հոդված 3

- *Լեզվական և հաղորդակցական կարողունակություն* որի շրջանակում երեխան պետք է տիրապետի գրական հայերենին, հաղորդակցվի տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորի խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդգծվում է, որ երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին:
- *ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝* ուղղված է երեխայի պատճառահետևանքային կապեր տեսնելու կարողության զարգացմանը, երեխայի գործունեության տարբեր ձևերի մեջ ներգրավմանը:
- *ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝* որն ուղղված է երեխայի կողմից իր արտաքին առանձնահատկությունների և սեռադերային պատկերացումների ձևավորմանը,
- *ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն* որի միջոցով երեխան պետք է տարրական պատկերացումներ ունենա սեփական իրավունքների ու պարտականությունների մասին, պետք է տիրապետի սոցիալական արդարության պարզագույն կանոններին, ճանաչի հայրենիքի դրոշը, զինանշանը և օրհներգը:
- *թվային և մեդիա կարողունակություն* սահմանում է որ երեխան ուսուցում ստանալով նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է տիրապետի մեդիագրագիտության և անվտանգության հիմնական կանոններին՝ հասկանալով դրանց հետ կապված վտանգները, մեդիագրագիտության կանոններին տիրապետելու համար երեխան պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ:
- *մշակութային կարողունակություն*, որը ուղղված է երեխայի կողմից գեղեցիկը գնահատելու, ճանաչելու, վերլուծելու հատկությունները, արվեստի միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքները ու տպավորությունները:
- *մաթեմատիկական և տեխնիկական կարողունակությունը* սահմանում է երեխայի կողմից պարզ մաթեմատիկական գործողությունների, համեմատման,

հետազոտման, խնդիրների լուծման, առարկաները ըստ նյութերի տարբերակման հատկությունը:

- *տնտեսական կարողունակություն* որի միջոցով երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Ունենում է տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ, հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացին:
- *ֆիզիկական կուլտուրայի կարողունակությունը* սահմանում է, որ երեխան պետք է պատկերացում ունենա ֆիզիկական վարժությունների, առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոններին: [2]

Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ կարողունակություններն ունեն ոլորտային ուղղվածություն, ուսուցման ու զարգացման գործընթացում դրանք մեկ ամբողջություն են, քանի որ մեկը լրացնում է մյուսին և հանդիսանում շարունակություն: Նախադպրոցականի համար սահմանված կրթական ու զարգացման ոլորտներից բացի չափորոշչում ամրագրված են դրանցից ակնկալվող երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները՝ ըստ նախադպրոցական տարիքի փուլերի:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքային բոլոր փուլերի զարգացման անհատական առանձնահատկություններով:

Նախադպրոցական կրթության բովանդակությունն իրենից ներկայացնում է նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման և կրթական ընդհանուր նպատակներից բխող

[2] «ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» Երևան 2021 թ. 744-Ն

գիտելիքների, կարողությունների, հմտությունների նաև արժեքային համակարգի ձևավորում:

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են.

1. Երեխայի ֆիզիկական, բարոյական, և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը
2. նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
3. դպրոցական ուսուցմանը նախապատրաստելը [3]

Նախադպրոցական կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.
2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.
3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.
4) իմացական ոլորտ.
5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

Ընդհանրացնելով վերոնշյալը կարող ենք ասել, որ յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի պլանավորման հիմքը չափորոշիչն է, որը պարտադիր պետք է կիրառվի ցանկացած նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից անկախ իր կազմակերպահիրավական ձևից և ենթակայությունից: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի, կամ միջոցառման կազմակերպման նպատակը պետք է բխի նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունից, վերջինների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վերջնարդյունքներն ունենալու ակնկալիքով: Կրթության կազմակերպման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն, հաշվի առնվեն նրանց հետ տարվող անհատական աշխատանքների ու մշտադիտարկումների արդյունքները:

[3] Հովհաննիսյան Ա. Ա. «Դաստիարակենք միասին» Երևան 2014 թ. 138 էջ/ էջ22/

1. 2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջների կիրառումը որպես ուսումնական և դաստարակչական աշխատանքների կազմակերպման հիմք։

Նախադպրոցական կրթությունը տարիքային մանկավարժության առաջին օղակն է, որն ուսումնասիրում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարկության և ուսուցման օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության նպատակը հուզականորեն կայուն, արտաքին աշխարհին համարժեք անձագանքող, զարգացած երեխայի ձևավորումն է։ Նախադպրոցական կրթության վերաբերյալ իրենց ուրույն տեսակետներն են ներկայացրել Յան Ամոս Կոմենսկին, Ռուսոն, Հենրիխ Պեստալոցին, Ուշինսկին և այլոք։ Ըստ Պեստալոցիի նախադպրոցական կրթության նպատակը, մարդու բոլոր բնական ուժերի ու ընդունակությունների զարգացումն է, ըստ որում զարգացումը պետք է լինի բազմակողմանի և ներդաշնակ։[4] Ըստ ռուս մանկավարժ Ուշինսկու, կրթության մակարդակներից ամենակարևորը նախադպրոցական կրթությունն է։ Նա պնդում էր այն միտքը, որ նախադպրոցական կրթությունը մանկավարժության կորիզն է։ Նա գրում է, որ «Ինչքան փոքր է տարիքը, այնքան մեծ պետք է լինի անձի մանակավարժական վերապատրաստումը. . . . սկզբնական դպրոցը պետք է դնի ընդհանուր դպրոցի հիմքը և նպաստի անհատի դրական հատկանիշների առաջացմանը»։ [5]

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, նախադպրոցական կրթական չափորոշչային պահանջների բավարարման, պարապմունքների մեթոդական հագեցվածության համար պատասխանատու են բոլոր նախադպրոցական մանկավարժական աշխատողները։ Նրանց գործառույթն է հանդիսանում երեխաների անհատական առանձնահատկություններից ելնելով իրականացնել զարգացնող և դաստիարակչական աշխատանքներ, ամենօրյա աշխատանքում ցուցաբերել

---

[4] К. Д. Ушински «Педагогика педагогических правилах воспитания человека»'
Питер 1999 г. 280 с.

[5] И. Г. Песталоцци Актуальность теории обучения и воспитания Москва 1989 г. 320 с.

նրբանկատություն, համբերատարություն և հանդուր-ժողականություն։ Յուրաքնաչյուր մանկավարժ ելնելով նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներից պետք է կարողանա պայմաններ ստեղծել երեխաների լիարժեք զարգացման և ուսուցման համար։

Նախադպրոցական կրթական հաստատությունների աշխատողների պաշտոնային պարտականությունները հստակ սահմանված են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից և յուրաքանչյուր աշխատող պետք է ուղղորդվի այդ պահանջներին համապատասխան։ Ուսուցման և դաստիարակության տեսանկյունից կարևոր պայման է հանդիսանում ներկայացնել դրանց անմիջական պատասխանատուների աշատանքին ներկայացվող պահանջները և պարտականությունները։ Պետք է նշենք այն հանգամանքը, որ ուսումնական հաստատությունում աշխատանքները փոխկապակցված են և պետք է կրեն համագործակցային բնույթ։ ՆՈՒՀ-ում կոնկրետ ուսումնական պարապմունքի պլանավորման ու անցկացման համար անմիջական պատասխանատվություն է կրում դաստիարակը/մանկավարժը/։

Ուսուցման և դաստիարակության տեսանկյունից դաստիարակի պաշտոնային պարտականություններն են.

- պլանավորում և իրականացնում է սաների ուսուցումն ու դաստիարակությունը, կենսագործունեությունը, նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին, կրթական ծրագրերին համապատասխան
- կատարում է ամենօրյա աշխատանք նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման և հարմարունակության (ադապտացիայի) համար,
- սաների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրման և հոգեբանի հանձնարարականի վրա պլանավորում և անցկացնում է նրանց հետ շտկողական, զարգացման աշխատանք,
- կազմակերպում է սաների օրվա ռեժիմը, օգնում է գեղագիտական, մարզական տարաբնույթ սեկցիաներում ուսուցման, ժամանցի կազմակերպմանը և լրացուցիչ կրթություն ստանալուն

- ուսունասիրում է երեխաների անհատական առանձնահատկությունները և հետաքրքրությունները
- մանկավարժական գործունեության մեջ իր ուսումնասիրության արդյունքները հմտորեն օգտագործում է յուրաքանչյուր երեխայի անձնային զարգացման համար
- ստեղծում է անհարաժեշտ պայմաններ կրթադաստիարակչական աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար:

Ինչպես տեսնում ենք, նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժի աշխատանքը բազմաբնույթ է, այն պահանջում է ոչ միայն մասնագիտական այլ նաև անձնային որոշակի որակների և մանկավարժական հմտությունների առկայություն: Անձնային և մասնագիտական որակները միասնական են և դրսևորվում են աշխատանքային գործունեության ամբողջական ընթացքում: Նշված որակներից բացի մանկավարժական գործունեության արդյունավետ պլանավորումը դաստիարակից պահանջում է որոշակի ընդունակությունների առկայություն, որոնք պայմանականորեն բաժանվում են հինգ խմբի

- Գնոստիկ կամ գիտական ընդունակություններ որոնք իրենցից ներկայացնում են ակադեմիական և ուսուցանող կարողություններ, որոնք հնարավորություն են տալիս երեխային ուսուցանելու և դաստիարակելու նրան մանրամասն զննելով, նրա ներաշխարհը թափանցելով և հասկանալով:
- Կառուցողական կամ կոնստրուկտիվ ընդունակություններն անհրաժեշտ են մանկավարժական գործընթացը տրամաբանորեն նախագծելու և հեռանկարային ակնկալիքները կանխատեսելու համար: Կառուցողական ընդունակությունները օգնում են նաև ամենօրյա ընթացիկ մանկավարժական աշխատանքն արդյունվետ կազմակերպելու գործում:
- Հաղորդակցական ընդունակությունները հիմնականում ուղղված են երեխաների հետ վստահելի փոխհարաբերությունների և համագործակցության հաստատմանը

- Կազմակերպչական ընդունակությունները նպաստում են դաստիարակի մասնագիտական գործունեության ռացիոնալ պլանավորմանը, երեխաների գործունեության տարբեր ձևերի կազմակերպմանը
- Հատուկ ընդունակությունները վերաբերում են մանկավարժին բնորոշ այն հավելյալ կարողություններին, որոնք առավել հետաքրքրիր և բովանդակալից են դարձնում երեխաների առօրյան:

Այս ամենից զատ անչափ կարևոր է, որ նախադպրոցական մանկավարժները ունենան մարդկային բարձր որակներ, և գործունեության պլանավորման ընթացքում հաշվի առնեն նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունները:

Նախադպրոցականների հետ տարվող ուսուցման ու զարգացման ոլորտները տարբեր են, այնուամենայնիվ, անկյունաքարային են հետևյալ հիմնական թեմաները՝

- Անձնային, սոցիալական, տնտեսական և էմոցիոնալ զարգացում
- Ստեղծագործական և գեղագիտական զարգացում
- Մաթեմատիկական իրազեկում
- Ֆիզիկական զարգացում, ֆիզիկական առողջություն
- Խաղ, ժամանց
- Թիմային աշխատանք
- Ինքնասպասարկման հմտություններ
- Հաղորդակցման հմտություններ, երկխոսելու, մենախոսելու կարողություն
- Գիտական մտածողություն
- Գրագիտություն

Պարապմունքների ժամանակ հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն խոսքը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը, տրամաբանական մտածողությունը, քանի որ հենց նման կերպ կարելի է հիմք նախապատրաստել, որ նախադպրոցականը կարողանա սոցիալականացվել, դրսևորվել միջավայրում: Այս ամենը ճիշտ կազմակերպելու և իրականացնելու համար, հարկավոր է, որ մանկավարժական աշխատողները քաջածանոթ լինեն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչային պահանջներին:

Նախադպրոցական ուսուցումը պետք է նպատակաուղղված լինեն.

1) հետաքրքրասիրության զարգացմանը՝ որպես նախադպրոցականի ճանաչողական (իմացական) ակտիվության գործոնի.

2) երեխայի ընդունակությունների զարգացմանը.

3) ստեղծագործական երևակայության զարգացմանը.

4) հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

Նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը:

1.3 Ուսումնական գործընթացի պլանավորման կարևորությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կարևոր և առաջնային պայման է հանդիսանում ուսումանական աշխատանքների պլանավորումը։ Պլանավորման հիմնական նպատակը ուսուցման նպատակաուղղվածությունը և օպտիմալությունն ապահովելն է։ Պլանում տրվում են ընկալման ենթակա ուսումնական նյութի բաշխման հաջորդականությունը և մատուցման տևողությունը։ Պլանավորումը իր մեջ պարունակում է հետևյալ հաջորդականությունը՝ նախապատրաստական աշխատանքներ ուսումնական պարապմունքից առաջ, բուն ուսուցման գործընթացը և վերլուծական աշխատաքն որը պետք է իրականացնել ուսուցման աշխատանքից հետո։[6] Պլանավորման գործընթացում թերևս ամենակարևորը ուսուցման և դաստիրակության նպատակի հստակ գիտակցումն է ուր ենք մենք ուզում հասնել, ինչ ուղիով, ինչ միջոցով ինչպես նաև այն վերջնարդյունքները որը պետք է ունենան երեխաները ուսուցման ավարտին։ Ուսուցման գործընթացը կազմակերպելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակի կառվարմանը, ժամանակին հետևելը ամբողջ պլանավորած գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն է։ Ուսուցման պլանավորումը ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք, որի միջոցով մանկավարժը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի ուսուցման նպատակի իրականացաման։ Ուսուցման և դաստիարակության գործընթացը պլանավորելիս կարևոր մաս է կազմում նաև ուսուցման միջավայրի համապատասխանեցումը տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին։ Մանկավարժը պետք է դիդակտիկ նյութերը համապատասխանեցնի տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին։

Ըստ այդմ նախադպրոցական կրթական չափորոշչի համաձայն ուսուցման պլանավորման ժամանակ պետք է.

1.հաստատությունում առկա լինեն սարքավորումներ, դիդակտիկ և տեսալսողական միջոցներ երեխաների համակողմանի զարգացման համար

[6] Միտոյան Հ. Սմբատյան Լ. «Ուսունական ձեռնարկ մանկապարտեզի համար» -Երևան 2010 թ. 80 էջ

2. ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար.
3. խաղեր երեխաների ինտելեկտուալ զարգացման համար
4. խաղալիքներ և սարքավորումներ սենսորային զարգացման համար.
5. դիտողական, նկարազարդ նյութեր.
6. պայմաններ երեխաների անհատական և համատեղ ակտիվության դրսևորման համար.

Ուսումնական գործընթացի պլանավորումը նաև բարձրացնում է մանկավարժի մասնագիտական որակները, թույլ տալիս, որ վերջինս փնտրի ու գտնի ուսուցման բովանդակությանը համապատասխանող խթանիչ միջոցներ, պարապմունքը հետաքրքիր ու չկրկնվող անցկացնելու ձևեր:

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժը, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, պետք է հիմք ընդունի նախադպրոցական կրթական չափորոշչային ոլորտները, կրթության բովանդակությունը և պահանջվող կարողունակությունները: Ուսումնական պարապմունքի պլանավորումը նախադպրոցական մանկավարժական աշխատողից պահանջում է ոլորտային ուսումնասիրություններ, ՏՀՏ ստեղծելու և կիրառելու կարողություն, գործընկերների հետ համագործակցելու ունակություն: Նախադպրոցական կրթության մեջ կարևոր բաղադրիչ է նաև ինտեգրված ուսուցումը: Այս պարագայում ուսումնական պարապմունքը պլանավորվում է մի քանի մանկավարժների կողմից, մեկ պարապմունքի շրջանակներում իրականացվում է բազմաբաղադրիչ մոտեցում: Ինտեգրված ուսումնական պարապմունքները նպաստում են երեխաների համակողմանի զարգացմանը, խթանում գործնական կարողություններին, զարգացնում պատկերավոր մտածողությունը:

Իր աշխատանքը պլանավորելիս մանկավարժը պետք է կարողանա արդյունավետ փոխգործակցել ոչ միայն մանկավարժական կոլեկտիվի այլ նաև բազմամասնագիտական թիմի հետ:

Այսպիսով ընդհանրացնելով վերոնշյալը կարող ենք ասել, որ ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է չափորոշչների

պահանջների կիրառումից, համագործակցային աշխատանքից, ուսումնական պարապմունքի պլանավորման ու նախագծման աշխատանքների իրականացումից։

ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 Ուսուցման և դաստիարակչական աշխատանքի պլանավորում՝չափորոշչային պահանջներին համապատասխան

Ստորև աղյուսակի տեսքով կներկայացնեմ ուսումնադաստիարակաչական աշխատանքի 1 շաբաթյա պլանավորման օրինակ որը իրականացվել է հիմք ընդունելով չափորոշիչները։

		Լև Տոլստոյի «Երեք արջի հեքիաթը»
Լեզվական և հաղորդակցական կարողունակություն	**Նպատակը**	Տիրապետել գրական հայերենին, դրսևորել խոսքային և ոչ խոսաքյին ակտիվություն՝մասնակցություն ունենալով հասարակական կյանքին
	Խնդիրները	Զարգացնել բառապաշարը, ամրապնդել հիշողությունը, վերարտադրել լսածը և արտաբերել նոր սովորած բառերը, կատարելագործել բարին չարից տարբերելու կարողություն ։Խթանել երեխաների պատմելու կարողությունը, զարգացնել ստեղծագործական, քննադատական մտածողությունը,

	Վերջնարդյունք	-կկարողանան արտաբերել նոր բառեր - կսովորեն տարբերակել չարն ու բարին -կկարողանան արատբերել կապակցված խոսք -կկարողանան անկաշկանդ պատմել հեքիաթը
Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն		**Երկրաչափական պատկերներ**
	Նպատակ	սովորեցնել տարբերել երկրաչափական պատկերները
	Խնդիրներ	Երկրաչափական պատկերները օգտագործել ապլիակացիա պատրաստելիս, զարգացնել երկրաչափական պատկերներով աշխատելու կարողությունը
	Վերջնարդյունք	-երեխաները կտարբերեն երկրաչափական պատկերները -կկարողանան համեմատել դրանց տարբերությունները -թղթից կկարողանան ստանալ այդ պատկերները

		-կկաարողանան շրջապատում գտնել այդ երկրաչափական պատկերներով իրեր
ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն		**Օղակով վարժություններ, խմբային խաղեր**
	Նպատակ	արագ կողմնորոշվելու, ցատկելու, խմբային խաղերին մասնակցելու ընդունակության ձևավորում
	Խնդիրներ	խրախուսել ինքնուրույնությունը, հանդուրժողականությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործականությունը և համագործակցությունը, խմբի կանոներին հետևելու ընդունակությունը
	Վերջնարդյունք	-Կկարողանան կատարել հրահանգները -Կսովորեն լինել կազմակերպված -Կսովորեն այլ երեխաների հետ համագործակցությունը -Կհասկանան ֆիզիկական դաստիարակության դերը, առողջության պահպանման կարևորությունը

Տնտեսական կարողունակություն		**Աշխատանք, մասնագիտություն**
	Նպատակ	Ձևավորել երեխաների մասնագիտական հետաքրքրությունները, ծանոթացնել մի շարք մասնագիտությունների առանձնահատկություններին
	Խնդիրներ	Ձևավորել հարգանք ցանկացած աշխատանքի հանդեպ: Պատկերացում կազմել տվյալ մասնագիտության կարևորության և անհրաժեշտության մասին
	Վերջնարդյունքներ	-կկարողանան ակտիվ թվարկել մանսագիտոթյունները -կկարողանան միտք արտահայտել մասնագիտությունների մասին -հարգանքով կարտահայտվեն աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ -կկարողանան հասկանալ իրենց նախընտրած մասնագիտության գործառույթները
Ժողովրդավարական և քաղաքացիական	**Նպատակ**	Ներկայացնել մաքուր բնության և շրջակա միջավայրի

կարողունակություն/ Էկոլոգիա/		պահպանման անհրաժեշտությունը,
	Խնդիրներ	սովորեցնել շրջակա միջավայրի պահպանման կարևորությունը, նպաստել երեխաների սոցիալականացմանը արժեհամակարգի ձևավորմանը
	Վերջնարդյունքներ	կկարողանան հասկանալ բնության կարևորությունը, մաքուր պահելու, ինչպես նաև իրենց ներդրման անհրաժեշտությունը

Վերոնշյալ ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման արդյունավետության բարձրացան համար առաջնահերթ է դարձել.

1. Կիրառել ժամանակակից մեթոդական հնարներ, խաղային տեխնոլոգիաներ, ՏՀՏ բաղադրիչներ:

2. Կիրառել զննական պարագաներ, դիդակտիկ միջոցներ, թեմատիկ խաղալիքներ:
3. Կիրառել ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար

4. Կիրառել դիտողական, նկարազարդ նյութեր ինչը նույնպես հանդիսանում է չափորոշչային պահանջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, սույն հետազոտական աշխատանքի ընթացքում կատարված տեսական և հետազոտական ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին։

- ✓ Չափորոշիչը միտված է երեխաների իրավունքների պաշտպանությանը, համընդհանուր ներառմանը, կրթության որակի բարձրացմանը, բազմազանության խթանմանը և ճիշտ ուղղվածության ապահովմանը։
- ✓ Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը և երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի անձը հարգելու, համատեղ ուսումնառության գործընթացը խթանելու հնարավորություն է ընձեռում
- ✓ Ուսումնադաստիարակչական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է որպեսզի մանկավարժական աշխատողը մանրակրկիտ պլանավորի իր աշխատանքը նախադպրոցական կրթության կրթական չափորոշիչներին համապատասխան ինչպես նաև կիրառի ուսուցման նորարական տեխնոլոգիաներ, քանի որ դրանք երեխաներին ավելի նախաձեռնող և ինքնուրույն են դարձնում։
- ✓ Նախադպրոցական կրթության պլանավորման ժամանակակից համակարգը ներառում է նախադպրոցական կրթության վերլուծության կառուցվածքը, վերջնարդյունքների սահմանումը, աշխատանքի պլանավորումը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» Երևան 2021 թ. 744-Ն

2. «ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին» Երևան 2020 թ. հոդված 3

3. ՀՀ կառավարության օրենքը նախադպրոցական կրթության տարիֆիկացիաները հաստատելու մասին 2021 թ.

4. Հովհաննիսյան Ա. Ա. «Դաստիարակենք միասին» Երևան 2014 թ. 138 էջ/ էջ22

5. Միտոյան Հ. Սմբատյան Լ. «Ուսունական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010 թ. 90 էջ

6. Մարության Ա. Ա. Դալաքյան Ա. Մ. <<Նախադպրոցական Մանկվարժություն>> Երևան 2000 թ. 700 էջ

7. Ушински К. Д. «Педагогика педагогических правилах воспитания человека»' Питер 1999 г. 280 с.

8. Песталоцци И. Г Актуальность теории обучения и воспитания Москва 1989 г. 320 с